Հայաստանին, սկզբունքային որև է առարկություն չունենք, սակայն, չենք տեսնում այն ձևը, որ քաղաքական ստեղծված պայմաններում կարող էր հնարաւոր դարձնել այդ ակտը: Ընդհակառակը, քաղաքական դէպքերի դասաւորումով, Հայաստանի ներկայ Հանրապետութիւնը դարձել է յենարանը, որի վրա կանգնած՝ հայ ժողովուրդը պիտի չարունակէ Հայաստանի ամբողջացման գործը: Մենք չենք կարողանում երևակայել Հայաստան առանց Տաճկահայաստանի կամ առանց Ռուսահայաստանի»:

Ինչպէս տեսնում ենք, ո՛չ միայն ոգով, այլ հիմնական մտածելակերպով էլ տարբեր բևեռներ էին այս երկու «ծրագիր»-ները. մէկը ձգտում էր Հայաստանը փոխադրել Փարիզ դէպի գաղութահայութիւնը, միւսը կառչել էր մայրենի հողին ու չէր ուզում պոկուել: Մի մտածելակերպ, որ տիրական մնաց մինչև վերջ:

Նոր բանակցութիւններից, մի չարք պաշտօնական և անպաշտօն նիստերից ու փոխադարձ դիմումներից յետոյ, կողմերն, ի վերջոյ, յանգեցին հետևեալ եզրակացութեան: Հանրապետական պատուիրակութիւնը, իբրև վերջին պայման, ընդունում էր, որ

Ա. Ներկայ Պարլամենտը պետական բիւդջէն քննելուց և վաւերացնելուց յետոյ 1—2 ամսով արձակուրդ կը ստանայ:

Բ. Անմիջապէս կը ձեռնարկուի լրացուցիչ ընտրութիւնների. կընտրուեն 51 արևմտահայ պատգամաւորներ ևս:

Գ. Ընտրութիւնները կը կատարուեն Հայաստանի ընտրական օրէնքներով՝ տեղական պայմաններին յարմարեցնելով:

Դ. Ընտրական գործի կազմակերպութիւնն ու ղեկավարութիւնը կը ստանձնէ Պօղոս Նուպարի Պատուիրակութիւնը:

Ե. Միացեալ կառավարութիւնը կը կազմուի անմիջապէս, բայց եթէ պահանջեն, կարելի է կազմել և բիւդջէի քննութիւնը վերջացնելու ու Պարլամենտի դադար ստանալու ժամանակ:

Զ. Կառավարութիւնը կը կազմուի 9 նախարարից — 5 դաշնակցական, 4 ոչ-դաշնակցական: Վարչապետը դաշնակցական: Համաձայն ենք, որ արտաքին գործոց նախարարը լինի Պօղոս Նուպարը:

Է. Երաշխաւորում ենք, որ միացեալ կառավարութիւնը կը մնայ մինչև լրացած Պարլամենտի դոյութիւն ունենալը:

Ը. Համաձայն ենք, որ Միացեալ Պատուիրակութեան նախագահը լինի Պօղոս Նուպարը: Համաձայն ենք, որ Միացեալ Պատուիրակութեան մէջ դաշնակցականները լինեն փոքրամասնութիւն:

Թ. Համաձայնութեան ակտը կը յայտարարենք այն մտքով, որ Տաճկահայաստանն ու Ռուսահայաստանը միացել են միմեանց:

Պօղոս Նուպարի առաքելութեան վերջնական պայմանները.

Ա. Միացեալ Պատուիրակութիւն Պօղոս Նուպարի նախագահութեամբ:

Բ. Միացեալ կառավարութիւն 9 կամ 11 նախարարներից, որոնցից պատերազմական նախարարը չէզոք, իսկ մնացեալները՝ կէս առ կէս — 4 արևելահայ, 4 արևմտահայ և 4 դաշնակցական ու 4 ոչ-դաշնակցական: Սակայն, «մենք կրնանք նաև ընդունիլ 10 անձէ կազմուած կառավարութիւն մը դաշնակցական մեծամասնութեամբ» — 5 դաշնակցական, 4 ոչ-դաշնակ-